ԱՖԱԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՔ ԽՈՍՔԻ ԱՊԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԽՈՍՔԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Պայլոզյան Ժ. Հ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հասրաթյան Լ. Լ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի մագիստրոս

Հանգուցային բառեր և արտահայտություններ: Աֆազիա, խոսքի վերականգնում, խոսքի ապարգելակում, խոսքային նյութ, մոտորային աֆազիա:

Աֆազիա ունեցող անձանց խոսքի վերականգնումը բժշկական և հոգեբանամանկավարժական արդի հիմնախնդիրներից է: Աֆազիայի դեպքում իրականացվող լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը, մի շարք գործոնների հետ մեկտեղ, պայմանավորված է նաև խոսքային նյութի ընտրությամբ, որը պետք է բավարարի որոշակի պահանջների: Խոսքային նյութի բարդության աստիճանը, ծավալը, բազմազանությունը պայմանավորված է աֆազիա ունեցող անձի համար օբյեկտիվ և սուբյեկտիվ համարվող գործոններով և աֆազիայի տվյալ ձևի առանձնահատկություններով [4]: Խոսքային նյութ ընտրելիս մենք կարևորում ենք հետևյալ չափանիշները՝

1. Լեզվաբանական առանձնահատկությունները
2. Ազգային և մշակութային առանձնահատկությունները
3. Խոսքային նյութի հուզական կողմը
4. Հիվանդի տարիքային և անհատական առանձնահատկությունները
5. Խոսքային նյութի կիրառման բարձր հաճախականությունը

Լեզվաբանական առանձնահատկությունների կարևորումը ենթադրում է, որ յուրաքանչյուր լեզու ունի իրեն բնորոշ կառուցվածք և յուրահատկություններ՝ հնչյունահնչութային, հնչերանգային, շեշտադրության, բառապաշարի, նախադասությունների քերականական և շարահյուսական կառույցների և այլն: Հետևաբար, աֆազիա ունեցող հայալեզու անձանց խոսքի վերականգնման գործընթացում նպատակահարմար չէ այլ լեզուներով մշակված խոսքային նյութի կիրառումը, քանի որ այն պետք է համապատասխանի հայերենի լեզվաբանական կանոններին և օրինաչափություններին [3]: Սակայն մասնագիտական

գրականության մեջ դեռևս բացակայում են խոսքի վերականգնմանն ուղղված հայերեն լեզվով մշակված խոսքային նյութեր:

Ազգային և մշակութային առանձնահատկությունները հաշվի առնելու փաստը պայմանավորված է նրանով, որ հիվանդին <<հարազատ>> խոսքային նյութը բարձրացնում է լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը: Օրինակ՝ մոտորային աֆազիա ունեցող անձանց խոսքի ապարգելակման նպատակով լոգոպեդները կիրառում են 1-10-ը և 10-100-ը (տասնյակներով) հաշիվը, շաբաթվա օրերի, ամիսների թվարկումը, ինչպես նաև տվյալ հիվանդին ծանոթ երգերը, բանաստեղծությունները, ասացվածքները, նրան բնորոշ խոսքային դարձվածքները /ավտոմատիզմները/ և այլն: Որպես խոսքային ավտոմատիզմներ կարելի է դիտարկել հայկական մի շարք ֆիլմերում տեղ գտած բազմաթիվ թևավոր արտահայտություններ, օրինակ՝ «Ոսկե ցլիկը» ֆիլմում հնչող «Մարդը հացս կտրեց, կնիկը՝ ջուրս» արտահայտությունը և այլն:

Աֆազիա ունեցող անձանց հետ լոգոպեդական աշխատանքում մենք հաշվի ենք առնում նաև այն հանգամանքը, որ խոսքային նյութը կարող է ստեղծել դրական հուզական մթնոլորտ և դրանով նպաստել իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի բարելավմանը, որի արդյունքում հիվանդները սկսում են արտաբերել առանձին բառեր և բառակապակցություններ: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել հիվանդի տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ըստ վիճակագրական տվյալների՝ աֆազիան առավել հաճախ դիտվում է մեծահասակների շրջանում, հետևաբար, լոգոպեդական աշխատանքում կիրառվող խոսքային նյութը պետք է ընտրել այնպես, որ այն լինի պարզ և մատչելի, բայց միևնույն ժամանակ հիվանդին մանկական չթվա:

Խոսքային նյութի ընտրության ժամանակ կարևոր է նաև հաշվի առնել դրա կիրառման հաճախականությունը տվյալ լեզվական միջավայրում: Մոտորային աֆազիա ունեցող անձանց խոսքի ապարգելակման համար նախատեսված խոսքային նյութի կիրառման հաճախականությունը պարզելու նպատակով, մենք կազմեցինք հարցաթերթիկ, որում տեղ գտավ այն խոսքային նյութը, որը՝ ըստ մեր նախնական ենթադրության, հայալեզու մեծահասակների շրջանում ունի կիրառման բարձր հաճախականություն: Հարցաթերթիկն իր մեջ ներառում է խոսքի ապարգելակման համար նախատեսված նյութեր՝ 20 քառատող, 40 ասացվածք, 15 հակադիր զույգերով կազմված նախադասություն և 15 խիստ ենթատեքստ ունեցող նախադասություն (նախադասություն, որն իմաստային առումով կարելի է ավարտել միայն մեկ բառով): Սոցիալական հարցմանը մասնակցելու են տարբեր մասնագիտություններ ունեցող 100 անձ, որոնցից 70-ը՝ 40-50 տարեկան էին, 20-ը՝ 50-60 տարեկան, իսկ 10-ը՝ 60 տարեկանից բարձր [1]:

Հարցման մասնակիցներին առաջարկվել է շարունակել քառատողերը, ասացվածքները, ավարտել նախադասությունները: Օրինակ. <<Գնացի մարդի, ունեցա ...., գլ-

խարկը …, անունը … >>: Պատասխանները գնահատվել էին 4 բալային համակարգով: 1 միավոր տրվել է այն դեպքում, երբ մասնակիցը պատասխանել է «չգիտեմ», 2 միավոր՝ «ծանոթ է», 3 միավոր՝ «գիտեմ, սակայն այս պահին չեմ մտաբերում», և առավելագույն՝ 4 միավոր տրվել է այն անձանց, ովքեր կատարել են առաջադրանքը: Սոցիալական հարցման արդյունքները ներկայացված են նկար 1-ում:

Հարցման արդյունքում առավելագույն միավոր հավաքած, հետևաբար, կիրառման բարձր հաճախականություն ունեցող խոսքային նյութը՝ 14 քառատող, 33 ասացվածք, 11 հակադիր զույգերով կազմված նախադասություն, 12 խիստ ենթատեքստ ունեցող նախադասություն, ներկայացված է ստորև: Այն կարելի է կիրառել աֆերենտային կամ էֆերենտային մոտորային աֆազիա ունեցող անձանց խոսքի ապարգելակման փուլում:

Ավարտել/ ասել քառատողերը (երգեր և բանաստեղծություններ).

♦

Ամպի տակից ջուր է … (գալիս),
Դոշ է … (տալիս) … (փրփրում),
Էն ո՛ւմ … (յարն է) նստած … (լալիս)
Հոնգուր- … (հոնգուր) էն … (սարում):

(Հ. Թումանյան)

♦

Ժիր էր Մարոն, դուրեկան,
Նոր էր ինը տարեկան:
Նշանեցին Մարոյին
Տվին չոբան Կարոյին:

(Հ. Թումանյան)

♦

Ժամանակով կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գդակ չուներ,
Միայն, գիտեմ որ՝ որդիանց որդի
Ճանկել էր մի գառան մորթի:

(Հ. Թումանյան)

♦

Գնացի մարդի,
Ունեցա որդի,



Նկ.1 Սոցիալական հարցման արդյունքները

Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս:
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին,
Վա՛յ, Կիկոս ջան: (Հ. Թումանյան)

♦

Ես իմ անուշ Հայաստանի
արևահամ բարն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:
(Ե. Չարենց)

♦

Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես, Սիրող քո մոր խոսքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ, Հայոց լեզուն հազարագանձ:
(Ս. Կապուտիկյան)

♦

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնեկ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:
(Հ. Թումանյան)

♦

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար. ազատություն:
(Մ. Նալբանդյան)

♦

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք:
(Հ. Շիրազ)

♦

Մի ամլիկ գառ
Իրեն համար
Ջուր էր խմում առվակից.
Մեկ էլ դեմի ձորակից
Գայլն է կտրում վերևից
Խոսքին տալով էս ձևը:
(Հ. Թումանյան)

♦

Ծիծեռնակը բույն էր շինում,
Ե՛վ շինում էր , և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում:
(Ղ. Աղայան)

♦

Լինում է մի սար,
Էն սարում՝ մի ծառ,
Էն ծառում՝ փչակ,
Փչակում՝ մի բույն,
Բնում՝ երեք ձագ,
Ու վրեն կկուն:
(Հ. Թումանյան)

♦

Գարունը այնքան ծաղիկ է վառել,
Գարունը այնքան պայծառ է կրկին.
Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:
(Վ. Տերյան)

♦

Հե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին:
(Հ. Թումանյան)

Ավարտել ասացվածքները .

♦ Կարմիր կովը իրա կաշին ...
♦ Լավ է ուշ, քան ....
♦ Չկա չարիք առանց...
♦ Գիժը մի քար գցեց, հազար խելոք չկարողացան ...
♦ Ես աղա, դու աղա, բա մեր աղուն ո՞վ....
♦ Լեզուդ որ չլինի, ագռավը աչքերդ ....
♦ Փոս փորողը ինքն է փոսը ....
♦ Ստի ոտքը միշտ էլ ....
♦ Ով աշխատի, նա....
♦ Տաշած քարը գետնին ....
♦ Կարկուտը ծեծած տեղն է....
♦ Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը ...
♦ Գնա մեռի, արի ....
♦ Օձը տաքացնողին է....
♦ Անտեր մնաս դու բողազ, ինչ որ տեսնես ....
♦ Լավ է մեկ անգամ տեսնես, քան հազար անգամ ....
♦ Լավ է մարդու աչքը դուրս գա, քան ....
♦ Լավ է քիչ, քան ....
♦ Գյուղ կանգնի գերան .....
♦ Շատ գիտես, քիչ ...
♦ Լավ է գիտունին գերի լինես, քան թե անգետին...
♦ Նոր հավեր են եկել, երկաթի ձվեր են ...
♦ Նախ քո ծառը ջրի, հետո ...
♦ Ստի ոտքը միշտ ...
♦ Եղունգ ունես, գլուխդ ...
♦ Ունքը շինելու տեղը աչքն էլ ...
♦ Է՛շ, մի սատկի, գարուն ...
♦ Նախրի միջից էշի ճակատը ...
♦ Լավություն արա, ջուրը ...
♦ Գնա մեռի, արի ...
♦ Ճտերն աշնանն են ...
♦ Մոր թախտ՝ աղջկա՝...
♦ Ախորժակը ուտելուց է ...

Ավարտել <<խիստ ենթատեքստ>> ունեցող նախադասությունները.

♦ Տղաները բակում ֆուտբոլ են ...
♦ Աննան դաշնամուր է ....
♦ Հավը ձու է ...
♦ Ընտանիքով սեղանի շուրջ հաց էին ....
♦ Երկնքից երեք խնձոր ...
♦ Ձմռանը ձյուն է ...
♦ Եկեղեցում մոմ են ....
♦ Դերձակը հագուստ է ...
♦ Երեխան հոնգուր - հոնգուր լաց էր ...
♦ Գիշերը արևը մայր է ...
♦ Մենք գնեցինք տանձ ու ...

Ավարտել նախադասություններ՝ հակադիր զույգերով.

♦ Աշխատանքը սև է, հացը՝ ....
♦ Ամռանը շոգ է, իսկ ձմռանը՝...
♦ Խոսքը մեծին, ջուրը՝ ....
♦ Բոյը ՝ երկար, խելքը ՝ ....
♦ Խրատ տվողը շատ է , հաց տվողը՝ ....
♦ Քամու բերած, քամու ....
♦ Խրատ տվողները շատ են, լսողները՝...
♦ Կյանքն աստիճան է. մի օր վերևն ես մի օր՝ ...
♦ Կիտրոնը թթու է, մեղրը՝ ...
♦ Կատուն մլավում է, շունը՝ ...
♦ Ցերեկը լույս է, գիշերը՝...
♦ Պարանը հաստ է, թելը՝ ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հասրաթյան Լ.Լ. Մոտորային աֆազիա ունեցող անձանց խոսքի վերականգնման առանձնահատկությունները - մագիստրոսական թեզ <<Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն / լոգոպեդիա>> մասնագիտությամբ - Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Եր., 2015

2. Ղանալանյան Ա. Առածանի – Եր., 2000

3. Пайлозян Ж.А.Восстановление речи при афазии у билингвов. – Автореф. дис. … канд. пед. наук. –Ер., 1996

4. Цветкова Л.С. Нейропсихологическая реабилитация больных. Речь и интеллектуальная деятельность. – М., 1985.

Резюме

КРИТЕРИИ ВЫБОРА РЕЧЕВОГО МАТЕРИАЛА ДЛЯ РАСТОРМАЖИВАНИЯ РЕЧИ У ПАЦИЕНТОВ С АФАЗИЕЙ

Пайлозян Ж.А.

заведующая кафедрой логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, доцент

Асратян Л.Л.

магистр кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

Эффективность логопедической работы при афазии зависит от ряда факторов, в том числе и от речевого материала, при подборе и разработке которого нам представляется важным учитывать такие параметры, как лингвистические особенности восстанавливаемого языка, возраст пациента, его индивидуальные и национально-культурные особенности, эмоциональность речевого материала и частотность его применения. В результате проведенного нами соцопроса был выявлен представленный в статье высокочастотный речевой материал, который можно успешно использовать для растормаживания речи у армянскоязычных пациентов с моторными формами афазии

SUMMARY

THE CRITERIA OF SPEECH MATERIAL SELECTION FOR SPEECH RESTORATION OF PATIENTS WITH APHASIA

Paylozyan Zh. A.

Head of Chair of Rehabilitation and Speech Therapy, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, PhD, Docent

Hasratyan L. L.

Master Degree student at the Chair of Rehabilitation and Speech Therapy, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

The speech therap y efficiency in case of aphasia is conditioned by a number of factors, including speech material, for selection and development of which we highlight criteria, such as linguistic factors of the restored language, the patient's age, his/her individual, national and cultural features, the emotional characteristics of speech material and the frequency of its usage. As a result of our survey, speech material with a high frequency of usage was identified and introduced in the article. It can be successfully applied in speech restoration of people with motor aphasia.